

Մարդու իրավունքները հայաստանյան պաշտոնական դիսկուրսում

Ուսումնասիրության հեղինակ՝ Անահիտ Սիմոնյան
Սրբագրող՝ Անի Ասատրյան



ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ

Երևան, 2019 թ.

«...Դա նշանակում է նաև, որ այսուհետ մենք պարտավոր ենք մեր յուրաքանչյուր օրենսդրական քայլով հետամուտ լինել այն բանին, որպեսզի մեզանում երբևիցե չոտնահարվի մարդու արժանապատվությունը՝ ոչ մեր ընդունած օրենքներով և ոչ էլ դրանց շրջանցումով:»

Ռաֆայել Պապայան, ՀՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների և ազգությունների հարցերով հանձնաժողովի նախագահ, 1991 թ. ապրիլ:

Ներածական

Հավաքական հիշողությունը պատմական անցյալի վերաբերյալ գիտելիքի պահպանման այն տարածքն է, որով պայմանավորված է այդ հիշողությունը կրող սոցիալական խմբի/խմբերի հավաքական ինքնության կերտումը: Այն, թե ինչպես ենք մենք իբրև խումբ և/կամ հասարակություն «հիշում» և մեկնաբանում անցյալը, այդ անցյալից եկած որ ուղերձները, պատումներն ու դրվագներն ենք նախընտրում փոխանցել հաջորդ սերունդներին, մեծապես ազդում է մեր ներկա և ապագա քայլերի, ընթացիկ զարգացումների, քաղաքականությունների և կոլեկտիվ ընտրությունների վրա:

Հավաքական հիշողության ձևավորումը հնարավոր չէ դիտարկել անձնական և քաղաքական տարածքների շփման, իշխանություն ունեցող և այդ իշխանությանը դիմադրող սոցիալական խմբերի փոխազդեցության համատեքստից դուրս: Ի՞նչն ենք մենք պահպանում մեր հավաքական հիշողության մեջ և ի՞նչն ենք մոռացության մատնում և ինչու՞: Ովքե՞ր են ժամանակագրության, փաստերի և դրանց մեկնումների ընտրողները և «հեղինակները»: Որքանո՞վ ենք քննում անցյալի մասին այն գիտելիքը, որը մեր հիշողության մեջ պահպանվում է դասագրքերի, մամուլի, հասարակական դիրք և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հանրային խոսքի միջոցով:

Հայաստանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական առանցքային փոփոխությունները՝ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների համաժողովրդական պայքարը՝ «Թավշյա հեղափոխությունը» և երկրում տեղի ունեցած իշխանափոխությունը, արձագանքն էր Հայաստանում տասնամյակներ տիրող՝ մարդու իրավունքների և արժանապատվության ոտնահարման և սահմանափակման համակարգային դրսևորումների: Այս առումով պատմական անցյալի մասին հավաքական մեր հիշողության վերաիմաստավորումը՝ երկրում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարացման գործընթացների զարգացման համատեքստում, ունի գործառնական մեծ կարևորություն:

Ի՞նչ և ինչպե՞ս է խոսվել մարդու իրավունքների մասին առ այսօր երկրի կառավարումը ստանձնած՝ գործադիր և օրենսդիր առանցքային դերակատարների կողմից: Այս հարցին է պատասխանում «*Մարդու իրավունքները հայաստանյան պաշտոնական դիսկուրսում*» ուսումնասիրությունը, որն իրականացվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ կողմից նախաձեռնած՝ «Պետական գործիչների կողմից ներկայացվող հավաքական հիշողության բովանդակությունը» հետազոտական նախագծի շրջանակներում:

Տվյալ ուսումնասիրության **նպատակն է** ներկայացնել մարդու իրավունքների և դրան հարակից ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ այն հիմնական ուղերձներն ու շեշտադրումները, որոնք պաշտոնապես տեղ են գտել Հայաստանի անկախության հռչակումից՝ 1991 թ.-ից ի վեր երկրի կառավարումը ստանձնած երեք նախագահների՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի, ինչպես նաև նրանց օրոք ձևավորված կառավարությունների անդամների, Ազգային ժողովի պատգամավորների ելույթներում, բանավոր և գրավոր խոսքում:

Ուսումնասիրության մեթոդն է պաշտոնական՝ տպագիր և առցանց մամուլի վերլուծությունը: Իբրև ուսումնասիրության հիմնական աղբյուր է հանդիսացել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնական օրաթերթը (*այսուհետ՝ պաշտոնաթերթ*): Հիմնական այս աղբյուրից զատ, օգտագործվել է 2006 թ.-ին լույս տեսած ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի առանցքային ելույթներն ու հարցազրույցները ամփոփող՝ «Ընտրանի» ժողովածուն (խմբ. Աշոտ Սարգսյան), «Արմենպրես» գործակալության էլ. կայքը՝ armenpress.am, Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնական՝ president.am կայքը:

Ուսումնասիրությունն իրականացնելիս հստակեցվել են դիտարկվող նյութերի ժամանակագրական և թեմատիկ շրջանակները, իրականացվել է երեք նախագահների օրոք ձևակերպվող՝ մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսի բովանդակային համեմատական վերլուծություն: Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակը կենտրոնացվել է պաշտոնական այն ֆնևարկումների վրա, որոնք տեղ են գտել ընտրական և նախընտրական տարիներին: Այսպիսով՝ ուսումնասիրության ժամանակագրությունն ավարտվում է Հայաստանում տեղի ունեցած նախագահական վերջին ընտրությունների տարեթվով՝ 2013 թ.-ով: Ժամանակագրական շրջանակների հետ մեկտեղ հստակեցվել են թեմատիկ շրջանակները, առանձնացվել են երեք ուղղություններ՝ ներկայացված, համապատասխան երեք բաժիններում:

Բաժին 1-ում ընթերցողին ներկայացվում է մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսի ձևավորման տրամաբանությունը Հայաստանի Հանրապետության կայացման և միջազգային ճանաչման համար առանցքային՝ 1991-1992 թթ.-երին: **Բաժին 2-ում** անդրադառնում ենք մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումներին և ձևակերպումներին երեք նախագահներից յուրաքանչյուրի նախընտրական քարոզարշավների շրջանակներում: **Բաժին 3-ում** ներկայացվում է մարդու իրավունքների դիսկուրսը դատական համակարգին վերաբերող,

մասնավորապես, դատաիրավական բարեփոխումների շուրջ պաշտոնական քննարկումների համատեքստում:

Կարևոր է նշել, որ ուսումնասիրությունը *Նպատակ չի հետապնդում* գնահատել, թե ընտրված ժամանակահատվածներում պետական քաղաքականությունն իրականում որքանով է եղել իրավունքահենք, երկրում ընթացող տարաբնույթ գործընթացները որքանով էին համապատասխանում մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքներին և արժեքներին:

Բաժին 1. Մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսի ձևավորումը

«Անկախություն», «հանրաքվե», «ԽՍՀՄ փլուզում», «պետականության կայացում», «ինքնորոշման իրավունք», «Ղարաբաղի ինքնորոշում», «Ղարաբաղյան պատերազմ»՝ սրանք են այն բանալի բառերը, որոնց շուրջ ձևավորվել է վաղ 90-ականների վերաբերյալ հավաքական մեր հիշողությունը: 1991-1992 թթ.-ն առանցքային էին Հայաստանի Հանրապետության համար՝ իբրև մուտք անկախ պետությունների միջազգային ընտանիք և համակարգ: Սակայն այս թվականները մեկնարկային էին Հայաստանի համար նաև մեկ այլ համակարգի մաս դառնալու տեսանկյունից՝ միջազգային մարդու իրավունքների համակարգի:

1991 թ. մարտին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի (ՀՀ ԳԽ) առաջին գումարման առաջին նստաշրջանի ավարտին հնչեցրած իր ելույթում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ, իսկ այնուհետ՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է, որ ԽՍՀՄ կազմալուծումն անխուսափելի է, քանի որ «պետությունը գտնվում է ներքին խորը հակասությունների մեջ, նրանում առկա իրողություններն իրարամերժ են և վիժեցնում են նման պետության բնական գոյատևումը»: Իբրև նման իրարամերժ և անհամատեղելի իրողություններ՝ Լևոն Տեր-Պետրոսյանը համարում է «միությունը, ժողովրդավարությունը և տնտեսական բարգավաճումը»: Այսպիսով, Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից ժողովրդավարական հասարակարգի կայացման անհրաժեշտությունը ներկայացվում է իբրև այն առանցքային հանգամանքը, որը բացառում է ոչ միայն Հայաստանի մնալը ԽՍՀՄ կազմում, այլ հենց ԽՍՀՄ գոյությունն ու գոյատևումն ինքնին: Մայիսի 23-ին «Վաշինգթոն պոստում» (The Washington Post) տպագրված՝ «Հայաստանի հայտնությունը» հոդվածում Լևոն Տեր-Պետրոսյանը, մասնավորապես, նշում է՝ «օգոստոսին Հայաստանի խորհրդարանն ընդունեց անկախության գործընթացի մասին Հռչակագիրը, որը վերջնական անկախության երկար ճանապարհի սկիզբն է: Մենք անկախությունը դիտում ենք իբրև գործնական անհրաժեշտություն՝ ժողովրդավարական հաստատությունների ստեղծման համար»:

«Անկախություն՝ հանուն ժողովրդավարացման և մարդու իրավունքների պաշտպանության» կամ «Ժողովրդավարության կայացման անհնարինությունն առանց անկախացման»՝ այս երկու կոնցեպտների շրջանակներում է Նորանկախ Հայաստանում ձևավորվում մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսը:

1991 թ. Նոյեմբերի 11-ին՝ Հայաստանի հանրապետության Նախագահի պաշտոնամուտի իր ելույթի ժամանակ, Լևոն Տեր-Պետրոսյանը հայտնում է, որ Նորաստեղծ Հայաստանի «վերափոխումը» տանելու ուղղությունը մեկն է՝ «*դեպի անկախ, իրավական պետություն, դեպի բազմակուսակցականություն, ժողովրդավարական հասարակություն, դեպի ազատ շուկայական տնտեսություն*»: Մինևսյն ժամանակ, իբրև արտաքին քաղաքականության ուղեգիծ, Հայաստանի առաջին Նախագահը հռչակում է «*ձգտումը հասցնել լիակատար քաղաքական անկախության, դառնալ միջազգային իրավունքի սուբյեկտ, Միավորված ազգերի կազմակերպության անդամ*»:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դառնում 1992 թ. մարտի 2-ին՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում: Գլխավոր ասամբլեայում այս կապակցությամբ ելույթ է ունենում ՀՀ արտաքին գործերի նախարար Բաֆֆի Հովհաննիսյանը՝ անդամակցության օրը կնքելով իբրև «*Հայաստանի պատմության մեջ ...ամենանշանակալի տարեթվերից մեկը... հիրավի կարևորագույն օր, երբ մեր հինավուրց երկիրը ոտք դրեց ՄԱԿ-ի շեմից ներս՝ դառնալով ազգերի համաշխարհային ընկերակցության լիիրավ անդամ...*»:



Գործնական քայլերի մակարդակում այս շրջանի կարևոր զարգացումներից էր նաև 1991 թ. ապրիլին Հայաստանի միացումը ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին և դրան կից Կամբոջայի արձանագրությանը: Այս կապակցությամբ ուշագրավ է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մարդու իրավունքների և ազգությունների հարցերի հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապայանի ելույթը, որում դաշնագրին միացումը Պապայանս

անվանում է «*շրջափոխային որոշում*», որով «*Հայաստանը հայտարարեց համաշխարհային ու համամարդկային իրավական նորմերն ու բարոյական արժեքները պաշտպանելու ու հանրապետության ներքին կյանքում գործի դնելու իր պատրաստակամության մասին*»: Պահպանելով Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական ուղեգիծը՝ իր ելույթում թե՛ Դաշնագրի շրջանակներում Հայաստանի պարտավորությունների իրականացումը և թե՛ Հայաստանում մարդու իրավունքների

պաշտպանությունը առհասարակ, ԳԽ մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի նախագահը կապում է Հայաստանի անկախացման գործընթացի հետ:

«Հայաստանը դեռ մնում է այն համակարգում, որը ստեղծվել է հակադիր հիմքերի վրա և պարտադրվել մեր ժողովրդին: Հայաստանը դեռևս նոր է սկսել թոթափել այդ համակարգի շղթաները և մարդու իրավունքների ապահովման աստիճանը կախված է այդ թոթափման աստիճանից, նրանից, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը տնօրինում իր կյանքի բոլոր ոլորտները, և ուրեմն իր քաղաքացիների իրավունքների լիիրավ ապահովումը հնարավոր է միայն Հայաստանի լրիվ անկախության դեպքում:...», - նշում է Պապայանը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագրին միացումը Պապայանը որակում է որպես «...ռեալ քայլերի ծրագիր և ոչ թե զուտ քաղաքական ռեկլամ», շեշտում է, որ «Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է հավատարիմ լինել մարդու իրավունքների միջազգայնորեն ճանաչված նորմերին»:

Հայաստանում ձևավորվող մարդու իրավունքների դիսկուրսը չէր կարող նաև շրջանցել նորանկախ հանրապետության առջև ծառայած կարևորագույն խնդրի՝ ղարաբաղյան հակամարտության ուղեգիծը: Խորհրդանշական է, որ առաջին անգամ 1991 թ.-ի «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի մասին խոսվում է հենց արցախահայության ինքնորոշման պայթյալի համատեքստում՝ «Ղարաբաղի ինքնորոշումը և մարդու իրավունքները ԽՍՀՄ-ում» հոդվածում: Հոդվածից տեղեկանում ենք, որ հունվարին՝ ժնևում մեկնարկած ՄԱԿ-ի մարդու իրավունքների 47-րդ. նստաշրջանին Հայաստանը մասնակցում է՝ ներկայացվելով ՀՀ ԳԽ մարդու իրավունքների և ազգությունների հարցերով հանձնաժողովի նախագահ Պապայանի կողմից: Հոդվածում քննարկվում են ժողովուրդների ինքնորոշման գործընթացները ԽՍՀՄ տարածքում և, մասնավորապես, Ղարաբաղում: Հիմնական շեշտադրումն է՝ «աշխարհի դիրքորոշման» հստակեցման անհրաժեշտությունը «խորհրդային «դեմոկրատիայի» և այն իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ԽՍՀՄ-ում և, մասնավորապես, Ղարաբաղում՝ «ինքնորոշման համար պայթյալի հասնելու ողջ փորձով հանդերձ»:

«Ղարաբաղ-ինքնորոշում-մարդու իրավունքներ» բանաձևը առանցքային է այս շրջանի պաշտոնական դիսկուրսի համար: Ղարաբաղի ինքնորոշումը ներկայացվում է իբրև Ղարաբաղի հայության մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայման, և այս համատեքստում շեշտադրվում է ՄԱԿ-ի և միջազգային այլ կառույցների աջակցության և միջամտության անհրաժեշտությունը: Պաշտոնական մամուլում կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի շրջանակներում և միջազգային այլ հարթակներում կայացող քննարկումներին՝ նվիրված կա՛մ բուն արցախյան հիմնախնդրին, կա՛մ մարդու իրավունքների, ազգային փոքրամասնությունների և ազգամիջյան կոնֆլիկտների հարցերին և այս համատեքստում՝ Արցախում տեղի ունեցող իրադարձություններին ու զարգացումներին:



Այսպիսով, 1991-1992 թթ.-ի պաշտոնական մամուլի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի ինտեգրումը ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգ պաշտոնական դիսկուրսի մակարդակում ձևակերպվում է իբրև քաղաքական մեծ կարևորություն ունեցող գործընթաց: Մարդու իրավունքների պաշտպանության և դրան հարակից՝ ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ պաշտոնական ուղերձներն ու շեշտադրումները միտված են ցույց տալու, որ որոշում կայացնողների կողմից այս գործընթացները դիտարկվում են իբրև ցուցիչ՝ Հայաստանի անկախացման գործընթացի լեգիտիմության,

անկախացման գործընթացի շուրջ հասարակական պահանջի և քաղաքական կամքի առկայության: Մարդու իրավունքների ու ժողովրդավարացման վերաբերյալ պաշտոնական դիսկուրսը սերտորեն կապվում է նաև Ղարաբաղի հայության իրավունքների պաշտպանության, ինքնորոշման պայթարի ճանաչման՝ միջազգային հանրությանը ներկայացվող պահանջի հետ:

Բաժին 2. Մարդու իրավունքները Լյոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի նախընտրական օրակարգերում

Անկախությունից ի վեր մինչև խորհրդարանական կառավարման մոդելին անցնելը (1991-2018 թթ.), Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել նախագահական 6 ընտրություններ: Դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում ընթացող նախընտրական և հետընտրական գործընթացներն ունեցել են հսկայական ազդեցություն երկրի հասարակական-քաղաքական իրավիճակի, հետագա զարգացումների և պատմական ընթացքի վրա: ՀՀ նախագահ ընտրված անձանցից յուրաքանչյուրի նախընտրական քարոզարշավային նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ընդհանրական պատկերացում կազմել երկրի կառավարման վերաբերյալ տվյալ անձի մոտեցումների մասին, որոնք, իրենց հերթին, հիմք են կազմում պաշտոնական դիսկուրսի ձևավորման համար: Սրանով է պայմանավորված տվյալ բաժնում ՀՀ երեք նախագահների՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրերում և քարոզարշավային ելույթներում մարդու իրավունքների և

ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումների և ուղերձների դիտարկման կարևորությունը:

1991 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած հանրաքվեին Հայաստանի անկախ հանրապետության հռչակման համար «այո» քվեարկեցին քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 99%-ը: Սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը վավերացրեց հանրաքվեի արդյունքները՝ Հայաստանը հռչակելով անկախ պետություն: 1991 թ. հոկտեմբերի 16-ին կայացած Նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ Գերագույն խորհրդի Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնում: Տվյալ պաշտոնում Լևոն Տեր-Պետրոսյանը վերընտրվեց նաև 1996 թ.-ի սեպտեմբերի 22-ին՝ պաշտոնավարելով մինչև 1998 թ.-ը: 1998 թ.-ի փետրվարին Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց: Կայացած արտահերթ Նախագահական ընտրությունների արդյունքում, 1998 թ.-ի մարտին երկրի կառավարումը ստանձնեց Տեր-Պետրոսյանի կողմից 1997 թ.-ին վարչապետ նշանակված Ռոբերտ Քոչարյանը, որը պաշտոնավարեց մինչև 2008 թ.-ը: 2008 թ.-ի Նախագահական ընտրությունների արդյունքում Ռ. Քոչարյանին փոխարինում է Սերժ Սարգսյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր երկրի վարչապետի պաշտոնը: 2013 թ.-ի փետրվարին կայացած Նախագահական ընտրություններում Ս. Սարգսյանը վերընտրվել է Հայաստանի Հանրապետության Նախագահ: Պաշտոնավարել է մինչև 2018 թ.-ը, երբ Հայաստանն անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի:

ՀՀ առաջին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Նախընտրական քարոզարշավ իրականացրել է միայն Նախագահի պաշտոնում երկրորդ անգամ առաջադրվելիս՝ 1996 թ.-ի Նախագահական ընտրությունների շրջանակներում: 1991 թ.-ի Նախագահական ընտրություններին Լևոն Տեր-Պետրոսյանը Նախընտրական քարոզարշավ իրականացնելուց հրաժարվել է:

Անկախության հանրաքվեից անմիջապես հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 26-ին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում, իբրև ՀՀ Նախագահի թեկնածու, Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է. *«Հայաստանը մի ժամանակ խորհրդային Միության ժողովրդավարական գործընթացների լիդերն էր, և դա մեզ մեծագույն քաղաքական վարկ տվեց, դա նաև մեր անկախությունը ճանաչելու կարևոր գրավականներից է: Ահա իմ տեսակետը, որ պարտավոր էի ներկայացնել ժողովրդին հոկտեմբերի 16-ի Նախագահական ընտրությունից առաջ, որպեսզի հնարավորություն ունենան ճիշտ կողմնորոշվելու: Սա՛ է իմ դիրքորոշումը, սա՛ է լինելու իմ քաղաքականությունը, և ես պայքարելու եմ անկախության այս ուղեգծի իրականացման համար»:*

1991 թ. հոկտեմբերի 23-ին «Հայք» թերթին տրված հարցազրույցում Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրությունների արդյունքում ստացած ձայները համարում է *«վստահության նոր քվե թե՛ ինձ և թե՛ Հայաստանի ժողովրդավարական իշխանությունների կուրսին»:*

1996 թ.-ի ընտրությունների նախընտրական իր ծրագրում Լևոն Տեր-Պետրոսյանն իբրև «6-ամյա գործունեության հաշվեկշիռ» է նշում Հայաստանում «ժողովրդավարական իրավունքների՝ բազմակուսակցականության, պառլամենտարիզմի, խոսքի, մամուլի, ցույցերի, երթերի, գործադուլների ազատության ապահովումը»: «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումն ու իրավական պետության օրենսդրական դաշտի ձևավորման սկզբնավորումը»:

Լևոն Տեր-Պետրոսյանի գործողությունների ծրագրում, մասնավորապես, իբրև առաջնահերթ խնդիր է նշվում «դատա-իրավական համակարգի բարեփոխումը»; ժողովրդավարական հաստատությունների ձևավորման «խորացումը», «խոսքի, մամուլի ու խղճի ազատության ապահովման, բազմակուսակցականության և պառլամենտարիզմի ամրապնդման, քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման գործընթացը» : Ներքին քաղաքականության բնագավառում ակնկալվող գործողությունների շարքում է «հշխանության մարմիններում կանանց համամասնական ներգրավվածությունն ապահովելու համար» պայմանների ստեղծումը: Արտաքին քաղաքականության բնագավառում խոսվում է «միջազգային քաղաքական կազմակերպություններում (ՄԱԿ, ԵԱՀԿ) խաղաղության ամրապնդման, միջուկային զենքի չտարածման, սպառնազինությունների կրճատման, հակամարտությունների խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների պաշտպանության դիրքորոշմամբ» հանդես գալու մասին: Սա միակ նախընտրական ծրագիրն է, որում մարդու իրավունքների միջազգային ափովկացիան նշվում է իբրև արտաքին քաղաքականության նպատակ:

Հայաստանում ժողովրդավարության կայացումը՝ իբրև նվաճում և նպատակ, հանդիսանում է Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական օրակարգի առանցքային շեշտադրումներից մեկը:

Ընտրական քարոզարշավի շրջանակներում Լևոն Տեր-Պետրոսյանն իբրև Հայաստանում ընթացող ժողովրդավարացման գործընթացների ցուցիչ է դիտարկում «օրինական, ժողովրդավարական, արդար և ազատ» ընտրությունների անցկացումը: Ավելին, «...ժողովրդավար ընտրությունները [խոսքը գնում է 1996 թ.-ի ընտրությունների մասին], անկախ արդյունքից, կլինեն իմ հաղթանակը», - նշում է Տեր-Պետրոսյանը:

Առհասարակ, բոլոր երեք նախագահների կողմից իրականացված քարոզարշավներում ամենից հաճախ մարդու իրավունքներին ու ժողովրդավարությանը վերաբերող շեշտադրումներն արվել են ընտրությունների օրինականության պահպանման համատեքստում: Նախագահներից յուրաքանչյուրի նախընտրական քարոզարշավում տեղ են գտել «ժողովրդավար» ընտրություններ իրականացնելու վերաբերյալ շեշտադրումներ, կոչեր, խոստումներ: Նախագահի պաշտոնում Տեր-Պետրոսյանին փոխարինած Ռոբերտ Քոչարյանը քաղաքական օրակարգ է բերում «ազգային միասնականության» կոնցեպտը, որի շուրջ է կառուցում 1998 թ.-ի նախագահական արտահերթ ընտրությունների քարոզարշավը:

«Այսօր, սակայն, ամենակարևոր խնդիրն ազգային միասնականության քաղաքականությունն է, որի միջոցով միայն կարելի է հասնել ցանկալի արդյունքների»:

Ընտրություններն իրականացվում են երկու փուլով՝ մարտի 16-ին և մարտի 30-ին:

1998 թ.-ի արտահերթ ընտրությունները պաշտոնական դիսկուրսում դիտվում են իբրև «*հատուկ նշանակություն ունեցող*» քաղաքական գործընթաց, որը պետք է կողմնորոշի Հայաստանում ժողովրդավարության զարգացման ուղեգիծը:

1998 թ.-ի մարտի 14-ին Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը նշում է. «*Մարտի 16-ին պետք է պատասխանենք մեկ հարցի՝ արդյո՞ք մենք ցանկություն ունենք և պատրաստ ենք գնալ ժամանակի հրամայականներին ընդառաջ, Հայաստանում կառուցել իրոք բաց և ժողովրդավար հասարակություն, թե դեռևս չունենք մեր մեջ այնքան ուժ, որ վայր զցենք անցյալի ստերեոտիպներով պայմանավորված կարծր բեռը*»:

1998 թ.-ին «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթն իրականացնում է նախընտրական քարոզարշավի բավականին հավասարակշռված լուսաբանում. ներկայացվում են տարբեր թեկնածուների նախընտրական ծրագրերը և ելույթները, տրամադրվում են տեղեկություններ ընտրությունների իրականացման կարգերի և կարգավորումների վերաբերյալ:

Ռ. Քոչարյանի 1998 թ. նախընտրական քարոզչական նյութերում մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումները սակավաթիվ են: Մարզային այցելությունների ընթացքում Քոչարյանը խոսում է սոցիալական քաղաքականության փոփոխության, աշխատատեղերի ստեղծման, արժանապատիվ աշխատավարձի ապահովման մասին, ուշադրության կենտրոնում է տնտեսական ոլորտը. «*Նա առաջարկում է բեկում մտցնել Հայաստանի տնտեսության մեջ և սոցիալական ոլորտում հենվելով համայն հայ ժողովրդի վիթխարի ստեղծագործ ներուժի և միասնականության վրա*»:

Պաշտոնաթերթում Ռ. Քոչարյանի նախընտրական ծրագիրը չի տպագրվում, սակայն առկա են մի շարք հոդվածներ նախընտրական ելույթների վերաբերյալ, ինչպես նաև հարցազրույցներ տեղական և միջազգային թերթերին:

Ընտրությունների առաջին փուլից հետո շատ է խոսվում ընտրախախտումների մասին: Մարտի 16-ի քվեարկության հաջորդ օրը տրված հարցազրույցում Ռոբերտ Քոչարյանը շեշտում է՝ «*ես դատապարտում եմ ընտրություններում անօրինականության դրսևորման ցանկացած փորձ և հայտարարում եմ, որ պետությունը երաշխավորում է ընտրությունների ազատ և արդար ընթացքը*»:

Մարտի 30-ին կայանալիք ընտրությունների նախօրեին Հանրապետության հրապարակում տեղի է ունենում Ռոբերտ Քոչարյանի հանրահավաքը, որտեղ հիմնական ուղերձն է կրկին ազգային միաբանությունն ու դրանով պայմանավորված՝ տնտեսական և սոցիալական առաջընթացը: Երկրում առկա մարդու իրավունքների խնդիրներին անդրադարձ չի արվում: Այս առումով արված միակ շեշտադրումն է «*օրենքի առջև բոլորի*

հավասարությունը»: Քոչարյանի նախընտրական «խոստումն» է, որ Հայաստանում բացառվելու է «որևէ կլանի, ընտանիքի գերիշխանությունը» և որ «բոլորը հավասար են լինելու օրենքի առջև»: Տվյալ շեշտադրումը պահպանվում է Քոչարյանի պաշտոնավարման ընթացքում՝ դառնալով, հատկապես, արդարադատական համակարգի կայացման շուրջ ծավալվող պաշտոնական դիսկուրսի առանցքային թեզը (տե՛ս, Բաժին 3):

Ռոբերտ Քոչարյանը նախագահի պաշտոնում վերընտրվում է նաև հաջորդ՝ 2003 թ.-ի ընտրությունների արդյունքում: Քարոզարշավը մեկնարկում է հունվարի 21-ին: Ի տարբերություն 1998 թ.-ի ընտրությունների, այս անգամ պաշտոնաթերթի՝ նախընտրական քարոզարշավի լուսաբանումը մեծամասնորեն կենտրոնանում է նախագահի թեկնածու Ռ. Քոչարյանի ելույթների և ուղերձների վրա:

2003 թ.-ի նախընտրական քարոզարշավի առանցքում է «Հայաստանը՝ տարածաշրջանի ամենակազմակերպված պետություն» թեզը. այս խորագրով էլ տպագրվում է Ռ. Քոչարյանի նախընտրական ծրագիրը:

Ի համեմատ 1998 թ.-ի, 2003 թ.-ի Քոչարյանի նախընտրական քարոզչական նյութերում մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումներ առկա են և ավելի հստակեցված են: Նախընտրական ծրագրի առանձին ենթաբաժիններում խոսվում է իրավունքի գերակայության և ժողովրդավարության մասին: Կրկին առանցքային ուղերձներից է՝ «*օրենքի առջև բոլորը հավասար են*»:

«Ինքնիշխան պետություն, ազատ և ժողովրդավար հասարակարգ կառուցելու հրամայականը առաջնահերթ է դարձնում մարդու ազատությունների և իրավունքների պաշտպանության օրենսդրական ու գործնական ապահովումը, բոլոր մակարդակներում ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը, որոշումներ ընդունելիս քաղաքացիների մասնակցության աստիճանի բարձրացումը»:

2003 թ.-ի ընտրությունները Ռոբերտ Քոչարյանը որակում է իբրև «լուրջ քննություն մեր ժողովրդավարացման ճանապարհին, որը պետք է կարողանանք գերազանց հանձնել»:

Իր նախագահության առաջին փուլի վերաբերյալ գնահատականներում, Ռ. Քոչարյանը հաճախ անում է «*ժողովրդավարության կայունացման*» վերաբերյալ (ի համեմատ 1998 թ.-ի) շեշտադրումներ:

«Ծայրահեղ բևեռացված էր ներքաղաքական վիճակը [1998 թ.-ին], վտանգված էին ժողովրդավարական գործընթացները՝ փակվել էին կուսակցություններ, արգելվել էին թերթեր, վտանգված էր դարաբաղյան խնդրի կարգավորումը և ակնհայտ էր միջազգային հանրության կողմից Հայաստանի մեկուսացման իրական վտանգ: Ի՞նչ ունենք այսօր, 5 տարի անց: Ներքաղաքական կայունություն, միջազգային հանրությանն ընդգրկվելու աշխույժ գործընթաց, մեր երկրի դերակատարության աճ տարածաշրջանում: Այսօր Հայաստանում ժողովրդավարացման գործընթացներին վտանգ չի սպառնում: Մենք գնում ենք այդ ուղղությամբ»:

Կրկին բազմաթիվ են ընտրություններն «ազատ» և «արդար» անցկացնելու վերաբերյալ ուղերձները: «Ամենաշատը մենք ենք շահագրգռված, որ ընտրությունները անցնեն օրենքի շրջանակներում», - ընտրությունների նախօրեին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարում է Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբի պետ Սերժ Սարգսյանը:

2003 թ.-ի նախագահական ընտրությունները ևս իրականացվում են երկու փուլով՝ փետրվարի 19-ին և մարտի 5-ին: Առաջին փուլի արդյունքում Ռ. Քոչարյանը հավաքում է 49.8% ձայն: Քարոզարշավի շրջանակներում տվյալ փաստը պաշտոնաթերթում ներկայացվում է իբրև իշխանության՝ «Ժողովրդավարական չափանիշներին հավաստարմության» հավաստիք: Ընտրությունների երկրորդ փուլի արդյունքում Ռ. Քոչարյանը վերընտրվում է ՀՀ նախագահի պաշտոնում:

Հաջորդ՝ 2008 թ.-ի ընտրություններին «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի լուսաբանման կենտրոնում է նախագահի թեկնածու, ՀՀ գործող վարչապետ Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզարշավը: Ընտրություններին իր թեկնածությունն է առաջադրում նաև ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: 2008 թ.-ի ընտրությունները՝ դրանց նախորդող և հաջորդող իրադարձություններով հանդերձ, առանցքային էին Հայաստանի Հանրապետության կյանքում, ուստի հարկ ենք համարում անդրադառնալ ոչ միայն նախընտրական, այլ նաև հետընտրական փուլում արված պաշտոնական մի շարք ելույթներին և դրանցում տեղ գտած՝ մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումներին՝ հետևությունները թողնելով ընթերցողին:

Նախընտրական քարոզարշավի շրջանակներում Սերժ Սարգսյանը հանդես է գալիս «Առաջ, Հայաստան» կարգախոսով, իսկ առաջին քարոզարշավային նյութը վերնագրված է՝ «Հայաստանի նախագահը պետք է ընտրվի ազատ, արդար ընտրությունների միջոցով»:

«Մեր ակտիվիստներին խնդրում եմ ընտրություններն այնպես անցկացնել, որպեսզի որևէ մեկը չկարողանա կշտամբել մեզ. սա չափազանց կարևոր խնդիր է: Հայաստանի նախագահը պետք է ընտրվի ազատ, արդար ընտրությունների միջոցով, նա պետք է ունենա ժողովրդի վստահության քվեն, որպեսզի կարողանա երկրի ներսում և դրսում լուրջ խնդիրներ լուծել» :

Պաշտոնաթերթում տեղ գտած՝ Սերժ Սարգսյանի քարոզարշավային նյութերում մարդու իրավունքների վերաբերյալ շեշտադրումները բացակայում են, ժողովրդավարության վերաբերյալ շեշտադրումները սակավաթիվ են և արվում են հիմնականում ընդհանրական՝ «մողելային» առումով, առանց կոնկրետ մեխանիզմների կամ գործողությունների հստակեցման: Նախընտրական ծրագիրը պաշտոնաթերթում չի տպագրվում: Քարոզարշավային նյութերը լի են «երկրի պայմանների» բարելավմանը վերաբերվող տարաբնույթ խոստում-շեշտադրումներով, հիմնական շեշտադրումն է՝ աղքատությունը և աղքատության հաղթահարումը, սակայն ոչ իրավունքահենք դիրքերից:

«Ս. Սարգսյանը բոլոր հանդիպումների ժամանակ խոսում է հանուն նոր, բարգավաճ, ավելի բարեկեցիկ Հայաստանի, և ընդդեմ բոլոր հոռի երևույթների, որ կան մեր հասարակության մեջ: Նա վստահեցրեց, որ պայթարելու է նման երևույթների դեմ, բայց հասարակության օժանդակությամբ, ակտիվ մասնակցությամբ. առանց հասարակական աջակցության անհնար կլինի արդար հասարակություն կառուցել, պայթարել կաշառակերության դեմ, կառուցել ժամանակակից ժողովրդավարական պետություն»:

«Նախագահի թեկնածուն [Սերժ Սարգսյանը] խոսեց պետությունների կառուցման երկու մոդելի մասին. առաջինը ժողովրդավարությունն է, երբ երկրի ղեկավարները գալիս են ժողովրդի մոտ ծրագրերով, խնդրում են ժողովրդի քվեն, վստահությունը: Երկրորդն ամբողջատիրականն է, երբ երկրի ղեկավարը մուրացկանություն է համարում ժողովրդին դիմելն ու նրա քվեն խնդրելը: Հայաստանի նոր նախագահը պետք է լինի ժողովրդի հետ, սիրի ժողովրդին, ժողովրդից քվե խնդրի: Ժողովրդին խնդրելը վիրավորական չէ, մուրացկանություն չէ: Մուրացկանություն է, երբ ցանկանում ես սեփական երկրի մի մասը տալ միայն նրա համար, որ ուզում ես պաշտոնդ պահել»:

Թեպետ պաշտոնաթերթում զգալիորեն գերակշռում են Սերժ Սարգսյանի քարոզարշավին վերաբերող նյութերը, վերջինիս Կենտրոնական նախընտրական շտաբի խոսնակ Էդուարդ Շարմազանովը լրագրողներին տրված հարցազրույցներից մեկում նշում է, որ «ընտրարշավը համեմատաբար ավելի անաչառ և ազատ է լուսաբանվում, հատկապես Էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից»: Հարցազրույցում Է. Շարմազանովն «իրենց թեկնածուի մրցակիցներին» մաղթում է «առողջ, ժողովրդավարական չափանիշներին հարիր ընտրապայթար» և հավելում «թող փետրվարի 20-ից հետո մեր ազգն ավելի միավորվի»:

Ինչպես հայտնի է, սակայն, փետրվարի 19-ին կայացած ընտրություններին հաջորդում է հասարակական բողոքի մեծ ալիք: Ընտրությունների արդյունքների վիճարկման պահանջով Սահմանադրական դատարան են դիմում ՀՀ նախագահի թեկնածուներ Լևոն Տեր-Պետրոսյանը և Տիգրան Կարապետյանը:

Այս կապակցությամբ 2008 թ. փետրվարի 29-ին ԱԺ-ում մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, «2006 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույցի ներկայացման շրջանակներում, նշում է, որ «ընտրության արդյունքները զիջումների ենթակա չեն, ինչքան էլ որևէ մեկը շատ մեծ ցանկություն ունենա»:

«Այո, կա հետընտրական գործընթաց, կան մարդիկ, որոնք Ազատության հրապարակում են, դա իրենց իրավունքն է, թեև պետք է ասեմ՝ առանց օրենքները խախտելու: Սա չի նշանակում, որ բոլորին պետք է հանրահավաքներով կամք թելադրել», - շեշտում է Հարությունյանը, այնուհետ հավելում. «Որևէ ձևով հնարավոր չէ մարդկանց կողմից օրենքի խախտումները բացառել ընտրական շրջանում, հետևաբար, իրավապահները պետք է աշխատեն: Բողոքելու իրավունքը պետք է հարգել, իհարկե, բայց եկեք ամեն ինչին

իր անունը տանք:...Այո, լավ կլիներ, որ այս զարգացումները չլինեին, սակայն ես կարող եմ բերել բազմաթիվ օրինակներ շատ ավելի հին ժողովրդավարություն ունեցող երկրներում, որտեղ հետընտրական գործընթացները նման զարգացումներ են ունեցել»:

Բողոքի ակիբին հետևում են 2008 թ.-ի մարտի 1-ի իրադարձությունները:

Փետրվարի 11-ին Նախագահի պաշտոնում տրված իր վերջին հարցազրույցներից մեկում Ռ. Քոչարյանը շեշտում է՝ «Ինչ դասեր կարող ենք քաղել այդ [Մարտի 1-ի] իրադարձություններից: Առաջինը՝ ժողովրդավարությունը կարիք ունի պաշտպանվելու ամբոխավարությունից: Դա համարում եմ ամենից կարևոր դասերից մեկը»:

Մարտի 8-ին Սահմանադրական դատարանը հրապարակում է ՀՀ Նախագահի փետրվարի 19-ին կայացած ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործի քննության որոշումը՝ ուժի մեջ թողնելով «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թ. փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը, ըստ որի՝ ընտրություններում հաղթող է ճանաչվում երկրի գործող վարչապետ, Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը: Ուշագրավ է դատական վճռի հետևյալ հատվածը.

«ՀՀ Սահմանադրության, սահմանադրական կարգի հիմունքներից և հիմնարար սկզբունքներից բխում է, որ ՀՀ ընտրությունները պետք է դառնան քաղաքական հակամարտությունների հաղթահարման և պետական կարգի հիմքերն ամրապնդող գործոն: Իրականում հետընտրական գործընթացներն ավելի են սրում թե՛ քաղաքական, թե՛ հասարակական հակամարտությունները՝ վտանգելով ժողովրդավարական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, համագործակցությունը, հանրային վստահությունը, քաղաքակիրթ երկխոսությունը: Նման իրավիճակը նաև սահմանադրաիրավական լուծումներ պահանջող հիմնախնդիր է, որին բազմիցս անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում»:

Սերժ Սարգսյանը ՀՀ Նախագահի պաշտոնը ստանձնում է նաև հաջորդ՝ 2013 թ.-ի ընտրությունների արդյունքում:

Նախընտրական քարոզարշավը մեկնարկում է հունվարի 21-ից:

Սերժ Սարգսյանը հանդես է գալիս «Դեպի ապահով Հայաստան» նախընտրական ծրագրով: Այս անգամ քարոզարշավային հիմնական ուղերձներից է «*լավագույն ընտրությունների անցկացումը*»:

«..Սակայն ապահով Հայաստան ունենալու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ ընտրություններն անցնեն ազատ, արդար և թափանցիկ: Մենք ունենք բոլոր հնարավորությունները լավագույն ընտրություններն անցկացնելու, քանզի առանց դրա անհնար է Հայաստանի հետագա զարգացումը»:

Ընտրությունների արդյունքների մասին տեղեկացնող՝ «Հայաստանի Հանրապետության» հոդվածում 2013 թ.-ի ընտրությունները հռչակվում են իբրև «լավագույն ընտրությունները՝ ՀՀ Նորագույն պատմության մեջ»:

Նախընտրական օրակարգում այս անգամ ևս մարդու իրավունքների դիսկուրսը բացակայում է՝ բացառությամբ «օրենքի գերակայության» և «դատական համակարգի» վերաբերյալ մի քանի շեշտադրումների:

«Արդար Հայաստան նշանակում է երկիր, որտեղ գերիշխում է միայն օրենքի ուժը, այլ ոչ թե ուժի օրենքը: ... «Չոռքայության» դեմ ամենաարդյունավետ զսպաշապիկն օրենքն է, մարդիկ պետք է օրենքի ուժը կիրառելու կարողություն ունենան», - ասաց Ս. Սարգսյանը՝ նշելով, որ գալիք 5 տարիների ընթացքում գործունեության կենտրոնում լինելու է դատական համակարգը, արդար դատարանի և դրա հասարակական ընկալման ձևավորումը»:

«Ս. Սարգսյանը նշեց, որ հավանություն տալով ներկայիս իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականությանը՝ մեր ժողովուրդը հավանություն է տալիս ժողովրդավարության և օրենքի գերակայության հաստատմանը մեր երկրում, խաղաղությանն ու կայունությանը»:

Նախագահի պաշտոնում Ս. Սարգսյանը մնում է մինչև 2018 թ.-ը: 2018 թ.-ի ապրիլի 17-ին Ս. Սարգսյանը Ազգային ժողովի քվեարկությամբ հայտնվում է Հայաստանի վարչապետի պաշտոնում, որից հրաժարական է տալիս 6 օր անց՝ ապրիլի 23-ին, համաժողովրդական պայթարի՝ «Թավշյա հեղափոխության» արդյունքում:

Այսպիսով, ՀՀ 6 նախագահական ընտրությունների քարոզչական փուլերում երկրի կառավարումը ստանձնած անձանց կողմից մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ արվող շեշտադրումներից առավել բովանդակայինները տեղ են գտել 1991 և 1996 թթ.-ի ընտրություններին, ինչը բնորոշ է տեր-պետրոսյանական կառավարման փուլին: Ռոբերտ Քոչարյանի նախընտրական օրակարգերում մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը քննարկվել են մեծապես դատաիրավական բարեփոխումների համատեքստում կառուցվելով առանցքային «օրենքի առջև բոլորի հավասարության» թեզի շուրջ: Առավել նվազ և ընդհանրական են մարդու իրավունքների շեշտադրումները Ս. Սարգսյանի նախընտրական օրակարգում, բացառությամբ ընտրությունների «ժողովրդավար» բնույթի վերաբերյալ բազմաթիվ շեշտադրումների, ինչը, սակայն, առհասարակ բնորոշ է հայաստանյան նախընտրական քարոզչական դիսկուրսին:

Բաժին 3. Մարդու իրավունքների դիսկուրսը դատաիրավական բարեփոխումների շուրջ պաշտոնական քննարկումների համատեքստում

Հայաստանում դատաիրավական համակարգի կայացումը, իբրև խնդիր և նպատակ, անկախ հանրապետության հռչակումից ի վեր կենտրոնական տեղ է զբաղեցնում պաշտոնական օրակարգերում: Բոլոր երեք նախագահների պաշտոնավարման օրոք քննարկվող՝ ամենագերակա խնդիրներից է դատաիրավական բարեփոխումների իրականացումը: Սա է նաև այն համատեքստը, որն իր բնույթով ամենամոտն է մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարացման հարցերի շրջանակին և կազմում է մարդու իրավունքների հայաստանյան պաշտոնական դիսկուրսի անբաժանելի մասը:

«*Դատաիրավական բարեփոխումներ*» եզրույթը պաշտոնական դիսկուրսի առանցք է բերվում վաղը 90-ականներից: Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք դատաիրավական բարեփոխումների իրականացումը դիտարկվում է իբրև Հայաստանում ժողովրդավարության հաստատման նախապայման, ինչը հատկանշական է տվյալ փուլում ձևակերպվող պաշտոնական դիսկուրսին, երբ ներքին և արտաքին բոլոր գործընթացները դիտարկվում են ժողովրդավար պետություն ստեղծելու հրամայականի ներքո (տե՛ս, Բաժին 1 և Բաժին 2):

1991-1996 թթ.-ի պաշտոնական քննարկումներից հնարավոր է դուրս բերել մի շարք խնդիրներ, որոնց լուծումը դիտվում է իբրև դատաիրավական համակարգի կայացման ցուցիչ, ինչպես՝ պայթարը «*դատախազության և դատարանական համակարգերում տարածված կաշառակերության*», «*անօրինական գործողությունների աղաղակելի երևույթների*» դեմ, դատարանի անկախության երաշխիքների ստեղծումը, դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի մշակումը, «*օրենքի գերակայության*» հաստատումը:

Գործնական մակարդակում, թերևս, տեր-պետրոսյանական շրջանի ամենաառանցքային զարգացումն է Սահմանադրության մշակումն ու ընդունումը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի ստեղծումը: Ինչպես հայտնի է, Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ.-ի հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով:

Առավել ակտիվ քննարկումներ տեղի են ունենում այս նպատակով ստեղծված՝ Սահմանադրական հանձնաժողովի նիստերի շրջանակներում: Հանրաքվեն, իբրև Սահմանադրության ընդունման միջոց անվանվում է «*ժողովրդավարության իդեալ*», իսկ Սահմանադրության ընդունումը և Սահմանադրական դատարանի ձևավորումը (1996 թ. փետրվարի 7) Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքյանը ավանում է «*ևս մի վճռական քայլ ժողովրդավարական պետության կայացման գործում*»: «*Սահմանադրական դատարանը, լինելով իշխանություն իրականացնող թևերից մեկը, գործուն*

մասնակցություն կունենա օրենքի գերակայության հաստատմանը, առանց որի ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն հասկացությունները դառնում են փուչ խոսքեր»,- ասում է Արարքյանն այս կապակցությամբ տրված հարցազրույցում:

Ի ամփոփում իր պաշտոնավարման առաջին փուլի՝ 1997 թ.-ին ՀՀ մամուլի քարտուղարի ճեպագրույցում նախագահ Տեր-Պետրոսյանի կողմից շեշտադրվում է «մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում անցած ճանապարհը և նվաճումները», այն է՝ «Սահմանադրության ընդունումը, դատաիրավական համակարգի բարեփոխումների շրջանակներում ընթացող գործընթացները, Սահմանադրության լիարժեք կիրարկման պարագայում անցումը հին վարչարարական պատժիչ համակարգից նոր Սահմանադրությանը համահունչ հումանիստական իրավահամակարգ» :

Դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտության շուրջ պաշտոնական քննարկումները մեծ ակտիվությամբ ընթանում են նաև Ռոբերտ Քոչարյանի նախագահության շրջանում: Անգամ անցումային 1998 թ.-ին պաշտոնաթերթին տրված հարցազրույցում ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, դատաիրավական համակարգի բարեփոխումները կոորդինացնող պետական հանձնաժողովի անդամ Խոսրով Հարությունյանը 1998թ.-ը անվանում է «դատաիրավական բարեփոխումների տարի» և նշում, որ հիմնական նպատակը օրենսդրության համապատասխանեցումն է «ժողովրդավարական հասարակության պահանջներին»: Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք նշանակված՝ արդարադատության առաջին նախարար Դավիթ Հարությունյանը արդարադատության ոլորտում տարվող աշխատանքները որակում է իբրև «հեղափոխություն».
«անկախ դատական իշխանության ստեղծումը «հեղափոխություն է» և մենք այն արեցինք»: Քոչարյանական կառավարման փուլի համար կենտրոնական՝ «օրենքի առջև բոլորի հավասարության»/«օրենքի միատեսակ կիրառման» թեզը ներկայացվում է իբրև «դատաիրավական բարեփոխումների հիմքում ընկած գաղափար»:

1990-ականների վերջին/2000-ականների սկզբին ակտիվ քննարկումներ են տարվում դատաիրավական բարեփոխումների մաս կազմող մի շարք օրենսդրաիրավական ակտերի փոփոխությունների, նոր օրենքների պատրաստման ու ընդունման շուրջ: Քննարկումների կենտրոնում են Սահմանադրության փոփոխությունների իրականացումը, դատական իշխանության անկախությունը և դատարանների եռաստիճան համակարգի կայացումը, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կայացումն ու գործունեությունը:

«խորհրդարանի հունիսի 17-ի արտահերթ նստաշրջանին վերաբերող հարցեր քննարկվեցին ԱԺ փոխնախագահ Ալբերտ Բազեյանի մոտ տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցության ժամանակ: Օրակարգում... ընդգրկված են դատաիրավական բարեփոխումների ընթացքն ապահովող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործունեության մեջ դնելու կարգը,

պետության դատարանակազմությունը, դատախազությունը, փաստաբանությունը, դատավորի կարգավիճակը սահմանող օրենքների նախագծերը» :

Ներպետական գործընթացներից զատ, այս շրջանում տեղի են ունենում առանցքային զարգացումներ նաև արտաքին քաղաքականության ոլորտում, որոնք մեծապես ներազդում են արդարադատական համակարգի կայացման, դատաիրավական բարեփոխումների, մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ ծավալվող քննարկումների բնույթի վրա: Եթե 1990-ականներին արտաքին քաղաքականության ոլորտում մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսի առանցքում էր Հայաստանի անդամակցությունը ՄԱԿ-ին, ապա 2000-ականներին կենտրոնական ուղեգիծն է Եվրոպական կառույցներում Հայաստանի ինտեգրումը և, մասնավորապես, Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ):

Ինտենսիվ հանդիպումներ են տեղի ունենում ԵԽ պատվիրակությունների և նախագահ Քոչարյանի, Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի և Հայաստանի պաշտոնական շրջանակների այլ ներկայացուցիչների հետ: Նման հանդիպումներին դատաիրավական համակարգի բարեփոխումների շուրջ քննարկումները կենտրոնական են:

Հայաստանի ինտեգրումը Եվրոպական կառույցներում Ռոբերտ Քոչարյանն անվանում է *«արտաքին քաղաքականության կարևորագույն սկզբունքներից»:* Այս համատեքստում արվում են բավականին հնչեղ շեշտադրումներ՝ ժողովրդավարության կայացման և երկրում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ: *«Մարդու իրավունքները մեզ համար հավատամք է,- շեշտեց Ռոբերտ Քոչարյանը, ավելացնելով.- Հայաստանում այլևս երբեք քաղբանտարկյալներ և փակ կուսակցություններ չեն լինելու»:*

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ-պետություն է դառնում 2001 թ.-ի հունվարի 25-ին՝ այսպիսով նաև մաս դառնալով մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մի ամբողջ համակարգի: Ստորագրման արարողության ժամանակ այս կապակցությամբ ԵԽ-ում հնչեցրած իր ելույթում Ռոբերտ Քոչարյանը միացումը ԵԽ-ին անվանում է *«մեծ նվաճում, որն ինքնին ամփոփում է մեր նախկին տասը տարիների անցած ճանապարհը»:*

«Միացումը պահանջել է երկար և մանրակրկիտ աշխատանք մեր կողմից: Նախկին տասը տարիների ընթացքում մենք սովորում էինք ժողովրդավարության եռլայնն ու պրակտիկաները: ...Ես վստահ եմ, որ Հայաստանում ժողովրդավարացման գործընթացները հետադարձ ճանապարհ չունեն: Այսպիսով, բարձրանում է նաև Հայաստանի պատասխանատվությունը՝ իբրև միջազգային ընտանիքի անդամ: Հայաստանի պատրաստակամությունը՝ խորացնել Եվրոպայի հետ ինտեգրումը, ամբողջովին արտացոլում է մեր ներպետական առաջնահերթությունները՝ ժողովրդավարության ամրապնդումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները: Չկա կասկած, որ սրանք են այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է Հայաստանի ներկան և ապագան»:

Անդամակցությունը ԵԽ-ին անմիջապես բերում է երկու այլ կարևոր գործնական զարգացումների՝ մահապատժի վերացմանը և Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծմանը: Քոչարյանի նախագահության վերջին տարում պաշտոնական բնարկումների առանցքում է 2005 թ.-ի Սահմանադրության փոփոխությունների գործնականացումը, «որակյալ» օրենսդրական դաշտի ստեղծումը: Ուշադրության կենտրոնում է պահվում համագործակցությունը ԵԽ տարբեր մարմինների հետ: Հայաստան այցելած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ժան Պոլ Կոստայի հետ հանդիպմանն ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը «վստահաբար ասում է», որ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դարձել է Հայաստանի՝ որպես ԵԽ անդամ երկրի, դատական համակարգի անբաժանելի մասը»: Անդրադառնալով դատաիրավական բարեփոխումների իրականացմանը՝ Թորոսյանը նշում է, որ Կոստայի այցը Հայաստան «համընկել է հետաքրքիր ժամանակաշրջանի հետ, երբ 2005 թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքները կյանքի են կոչվում»:

2008 թ.-ին նախագահի պաշտոնը ստանձնած Ս. Սարգսյանի օրոք շարունակվում է նախկին երկու նախագահների կողմից հաստատված՝ դատաիրավական բարեփոխումների կարևորության մասին դիսկուրսը: Խոսվում է դատաիրավական համակարգում «երկրորդ փուլի բարեփոխումների» իրականացման անհրաժեշտության մասին, շեշտադրվում և կարևորվում է դատախազության դերը:

«ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության պետական խորհրդական Աղվան Հովսեփյանի խոսքերով՝ Հայաստանի դատախազությունը ներկայանում է իր ուրույն նկարագրով, մարդու իրավունքների և պետության շահերի, օրենքների ու օրինականության պաշտպանության իր գործառույթներով, որոնց կենսագործումը ժողովրդավարության հիմքերով իր պետականությունը կառուցող երկրի յուրաքանչյուր դատախազի պարտքի և պատվի գործն է»:

Պաշտոնական դիսկուրսում շարունակում է շեշտադրվել եվրոպական կառույցների դերակատարումը դատաիրավական բարեփոխումների և «ժողովրդավարության կառուցման» գործում: Ս. Սարգսյանը «եվրամերձեցման քաղաքականությունը» բնութագրում է իբրև «Հայաստանի համար ոչ միայն ներքին բարեփոխումների, այլև արտաքին քաղաքական օրակարգի առանցքներից»:

Ս. Սարգսյանի օրոք դատաիրավական բարեփոխումներին վերաբերող՝ պաշտոնաթերթում տեղ գտած նյութերը պակաս հաճախականությամբ են հանդիպում, իսկ արվող շեշտադրումներն ընդհանրական են: Խոսվում է բարեփոխումների իրականացման կարևորության, դրանց հանդեպ «լրջագույն վերաբերմունքի» դրսևորման անհրաժեշտության մասին:

[Նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդակցության է հրավիրել ՀՀ դատաիրավական համակարգի ներկայացուցիչներին]- «Մեկ անգամ չէ, որ առիթ եմ ունեցել ասելու, որ դատարանների բնականոն գործունեությանը վերաբերող ցանկացած խնդիր պահանջում

Է լրջագույն վերաբերմունք: Նման հարցերին վերապահումներով մոտեցումները պարզապես անթույլատրելի են և աններելի»:

[Սերժ Սարգսյանը ելույթ է ունեցել Կոնրադ Ադենաուերի հիմնադրամում] - «Մենք ձգտում ենք կառուցել այնպիսի երկիր, որտեղ հավուր պատշաճի հարգվում են մարդու իրավունքները, երկիր, որտեղ դատաիրավական համակարգը գործում է լիովին անկախ, երկիր, որտեղ կա հավասար մրցակցություն քաղաքական ու տնտեսական դաշտերում, և ամենակարևորը՝ երկիր, որտեղ ժողովրդավարությունը ոչ թե լոկ ձև է, այլ նաև բովանդակություն: Սա է զարգացած երկիր և բարեկեցիկ ժողովուրդ ունենալու ճանապարհը, և մենք հետամուտ ենք այն անցնել մինչև նպատակի իրագործում»:

Սարգսյանական կառավարման փուլում դատական իշխանության շուրջ պաշտոնական բնարկումներից, թերևս, ամենահետաքրքրականն է ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի՝ 2008 թ. հունիսին տրված հարցազրույցը, որում նա անդրադառնում է արդեն իսկ իրականացված դատաիրավական բարեփոխումների և մարդու իրավունքների միջև կապին: Նախարարը նշում է, որ հարկ կլինի վերանայել «առաջին փուլի բարեփոխումները», քանզի «*օրենսդրական ակտերը, որոնք այս կամ այն կերպ առնչվել են դատաիրավական բարեփոխումների ոլորտին, ամբողջությամբ չէ, որ իրենց մեջ ներառել են մարդու իրավունքների պաշտպանության գերխնդիրը*»: Դանիելյանն այնուհետ հավելում է, որ «*կարծես թե գերատեսչությունները միմյանց միջև բանավեճ էին տանում՝ ոչ այնքան հիմք ընդունելով այն, թե իրենց կողմից առաջարկվող տարբերակը որքանով ընդունելի կլինի մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, այլ՝ թե որքանով են իրենք հաջողակ՝ իրենց շահերը պաշտպանող օրենսդրական ակտերը ընդունելի դարձնելով: ...Յուրաքանչյուր օրենսդրական նախաձեռնության հեղինակ պետք է հիմնավորի, որ այս կամ այն իրավական ակտը ոչ միայն բխում է Սահմանադրությունից, միջազգային չափանիշներից, չի հանգեցնում պետական բյուջեի ծախսերի, այլ նաև՝ թե ինչ սոցիալական ներազդեցություն կունենա. օրինակ, կվնասի՞ Էկոլոգիան, թե՞ ոչ, գործազրկությունը կմեծանա՞, թե՞ ոչ, որոշ սոցիալական խավեր իրենց եկամուտներից կզրկվե՞ն, թե՞ ոչ և այլն: ... Իսկ հետո իրավաստեղծ մարմինը պետք է հաշվետվություն ներկայացնի, թե որքան անաչառ է գտնվել ակնկալիքները ներկայացնելիս*»: Սա իր բնույթով պաշտոնական դիսկուրսում քիչ հանդիպող բովանդակային ելույթներից է: Դատաիրավական բարեփոխումների խնդիրը գտնվել և մինչ օրս շարունակում է գտնվել պաշտոնական դիսկուրսի առանցքում: Թեպետ գործադիր և օրենսդիր դերակատարների կողմից բազմիցս շեշտադրվել է կապը անկախ դատական իշխանության կայացման, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարացման գործընթացների ամրապնդման միջև, այնուամենայնիվ, պաշտոնական դիսկուրսը հազվադեպ է անդրադարձել այդ կապի բովանդակային կողմին, կոնկրետ խնդիրներին, մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում դատական իշխանության տարբեր մարմինների դերին և գործառույթներին:

Ի ամփոփում

Այսպիսով, տվյալ ուսումնասիրությունը՝ իր ժամանակագրական և թեմատիկ շրջանակներում, մի փորձ է բացահայտելու հայաստանյան պաշտոնական մամուլում տեղ գտած՝ մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ քննարկումների առանցքային ուղեգծերը՝ անկախության հռչակումից մինչև մեր օրեր: Այն ընթերցողին հնարավորություն է տալիս բացահայտելու մեզ հասած պատումների ձևավորման և զարգացման տրամաբանությունը, վերաիմաստավորելու ներկայիս մարդու իրավունքների դիսկուրսը, դրա տեղն ու դերը մեր հասարակության հավաքական հիշողության մեջ:

Ուսումնասիրությամբ դուրս են բերվել հետևյալ հիմնական դիտարկումները:

- Մարդու իրավունքների հայաստանյան դիսկուրսը ձևավորվել է անկախացման գործընթացներին համընթաց: Անկախ պետականության հռչակմամբ՝ Հայաստանը հայտ է ներկայացնում ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային համակարգի անդամակցության: Մարդու իրավունքների պաշտպանության ու ժողովրդավարության կայացման անհրաժեշտությամբ է հիմնավորվում Հայաստանի անկախացման գործընթացի լեգիտիմությունը երկրի կառավարումը ստանձնած առանցքային դերակատարների պաշտոնական խոսքում: Մարդու իրավունքների պաշտոնական դիսկուրսը սերտորեն կապվում է նաև Ղարաբաղի հայության իրավունքների պաշտպանության, ինքնորոշման պայքարի ճանաչման՝ միջազգային հանրությանը ներկայացվող պահանջի հետ:
- Հայաստանի կառավարումը ստանձնած երեք նախագահներից Լևոն Տեր-Պետրոսյանն է իր պաշտոնական ելույթներում առավել հաճախ անդրադառնում մարդու իրավունքների և ժողովրդավարացման խնդիրներին: 1991-1998 թթ. պաշտոնական մամուլում տեղ գտած հոդվածներում, տարբեր առիթներով հնչեցրած իր ելույթներում Լևոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի մասին խոսում է իբրև ժողովրդավարական հասարակարգ ունեցող պետությունների ընտանիքի լիիրավ անդամ դառնալու հավակնություններ ունեցող սուբյեկտի, որն այդ ուղղությամբ իրականացնում է մի շարք գործնական քայլեր: Ժողովրդավարության կայացումը Հայաստանում՝ իբրև նվաճում և նպատակ, հանդիսանում է Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական օրակարգի առանցքային թեզը:
- Ռ. Քոչարյանի պաշտոնավարման շրջանի մարդու իրավունքների դիսկուրսի առանցքում է Հայաստանի ինտեգրումը Եվրոպական կառույցներում և, մասնավորապես, անդամակցությունը Եվրոպայի խորհրդին: Արտաքին քաղաքական այս ուղեգիծը ներկայացվում է իբրև արտացոլում ներպետական առաջնահերթությունների՝ ժողովրդավարության ամրապնդման, օրենքի գերակայության հաստատման և մարդու իրավունքների պաշտպանության: Ռ.

Քոչարյանի նախընտրական օրակարգերում կենտրոնական է «օրենքի առջև բոլորի հավասարության» թեզը:

- ՀՀ 6 նախագահական ընտրությունների քարոզչական փուլերում՝ երկրի կառավարումը ստանձնած անձանց կողմից մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ արվող շեշտադրումներից առավել բովանդակայինները տեղ են գտել 1991 և 1996 թթ.-երի ընտրություններին: Առավել սակավաթիվ և ընդհանրական են մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ ուղերձներն ու շեշտադրումները ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչական նյութերում:
- «Մարդու իրավունքներ-ժողովրդավարություն-դատաիրավական բարեփոխումներ» քննարկումների ուղեգիծը կենտրոնական և գերակա է ՀՀ բոլոր երեք նախագահների օրոք: Տվյալ դիսկուրսը ձևավորվում է Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք՝ կրկին դիտարկվելով ժողովրդավար պետության կառուցման պահանջների համատեքստում: Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի օրոք ընթացող քննարկումներում դատաիրավական բարեփոխումները մեծապես քննարկվում են Հայաստան-Եվրոպա հարաբերությունների, Հայաստանի «եվրամերձեցման» գործընթացների համատեքստում:
- ՀՀ երեք նախագահների նախընտրական օրակարգերի, ինչպես նաև դատաիրավական բարեփոխումների համատեքստում պաշտոնական մամուլում և, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի էջերում տեղ գտած պաշտոնական ելույթների, պաշտոնական հանդիպումների և քննարկումների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ երկրի գործադիր և օրենսդիր առանցքային դերակատարների կողմից մշտապես շեշտադրվում է նշված բոլոր գործընթացներում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության սկզբունքների պահպանման կարևորությունը, պաշտոնական դիսկուրսը հազվադեպ է անդրադառնում այդ կապի բովանդակային կողմին, առկա մարդու իրավունքների խնդիրներին, այդ խնդիրների լուծման և սկզբունքների պահպանման մեխանիզմներին:

Ուսումնասիրության աղբյուրներ

«Արմենպրես» գործակալություն, տպագիր արխիվային նյութեր

«Արմենպրես» գործակալություն, առցանց՝ armenpress.am

«Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, տպագիր արխիվային նյութեր

«Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, առցանց՝ hhpress.am

«Ընտրանի» ժողովածու, իմբ. Ա. Սարգսյան, Երևան, 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական կայք՝ president.am